ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/21» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի

*(*Գրասենյակային և համակարգչային մեքենաների, սարքավորումների և նյութերի՝ բացառությամբ կահույքի և ծրագրային ապահովման*)*

ք. Երևան 01 դեկտեմբերի 2017թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Փոփոխություն կատարել գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Փոփոխություն կատարել գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ:

2.1 Քանի որ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-17/21» ծածկագրով գնման ընթացակարգին «Նորմա-Պլյուս» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում N 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի անվանումը ներկայացված է հրավերի տեքստին անհամապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված գնման հայտը N 3 չափաբաժնի մասով:

2.2 Գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ 7-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

7.3 N 3 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

2.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ուղարկել N 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի («Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ)՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները՝ ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնել իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն Հրավերի տեքստի հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

3.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի ստացման հաջորդող օրը, ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Պետրոսյան